«ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեքների ձևավորման գործում

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Լիլիթ Գասպարյան

Ուսումնական հաստատություն՝ Երևանի Դ. Հովսեփյանի անվան հ. 191 հիմնական դպրոց

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն 3

<<Սասնա ծռեր>> էպոսի մասին 5

Ազգային արժեհամակարգի ձևավորումը <<Սասունցի Դավիթ>> էպոսի միջոցով..... 7

Հայրենասիրության ձևավորումը <<Սասունցի Դավիթ>> էպոսի միջոցով..... 10

Աշխատասիրության ուսուցումը էպոսի միջոցով..... 13

Եզրակացություն..... 16

Օգտագործված գրականություն 17

Ներածություն

<<Էպոս>> հին հունարենից թարգմանաբար նշանակում ՝ խոսք, ասք, պատմություն: Գործածվում է երկու իմաստով՝

1. Լայն առումով գրական 3 սեռերից մեկն է (էպիկական, քնարական, դրամատիկական),
2. Նեղ ժանրային առումով ժողովրդական, հերոսական կամ ավանդական վեպ, վիպական, բնահյուսական ծավալուն և բարդ տեսակ, որը բաղադրվում է վիպական և պատմահերոսական երկերից, ավանդություններից, զրույցներից:

Ազգային էպոսը էպիկական ժանրի գործ է, որը ավանդաբար ներկայացնում կամ արտացոլում է որևէ ազգի մշակութային կամ ինքնաճանաչողական ոգին: Սրանք գրական հուշարձաններ են, որոնք հիշեցնում են, թե ինչ է տեսնում տվյալ ժողովուրդը <<հայրենիք>> սրբազան հասկացության մեջ: Ազգային էպոսների մեջ հաճախ նկարագրվում է տվյալ ազգային էթնոսի ծագման և զարգացման պատմությունը կամ պատմության մի մասը, ազգային ինքնորոշման կամ ինքնագիտակցման պատմության կարևորագույն դրվագները, ազգային խորհրդանիշների ծագման կամ ընդունման պատմությունը:

Հանրահայտ ազգային էպոսներ են շումերական <<Գիլգամեշը>>, հնդկական <<Ռամայանան>>, <<Մահաբհարաթան>>, <<Բհագավաթգիտան>>, հունական <<Իլիականը>>, <<Ոդիսականը>>, <<Թեոգոնիան>>, <<Արգոնավորդները>>, <<Ֆիվիադան>>, ռուսական <<Ասք Իգորի ճակատամարտի մասին>>, <<Բիլինան>>, ֆրանսիական <<Ասք Ռոլանդի մասին>>, <<Ասք Գիյոմի մասին>>, պարսկական <<Շահնամեն>>, կովկասյան <<Քյորօղլին>> և այն:

<u>Հետազոտական աշխատանքի թեմայի արդիականությունը</u>

Էպոսի թեման արդիական է, քանզի այսօր հայ ժողովուրդը կրկին պայքարում է օտար զավթիչների դեմ ՝ իր բնօրրանը պահպանելու համար: Էպոսի հերոսները կարող են հայրենասիրության, ազնվության, արդարության, մեծահոգության օրինակ ծառայել բոլորին:

<u>Հետազոտության նպատակը</u>

Արժևորել էպոսը որպես ժողովրդի համահավաք մտածողության արգասիք, նպաստել ազգային ինքնության ընկալմանը, ձևավորել արժեհամակարգ:

Նշված նպատակին հասնելու համար առանձնացված խնդիրներ

- Ուսումնասիրել <<Սասնա ծռեր>> էպոսի մշակումները
- Ուսումնասիրել էպոսում առկա ազգային տարրերը
- Ուսումնասիրել, գնահատել և արժևորել էպոսի հերոսներին

Հետազոտության վերջնարդյունքները

- Հետազոտել էպոսի պատմական սկզբնաղբյուրը
- Ուսումնասիրել և գնահատել հերոսներին
- Ձևավորել վերլուծական մտածողություն

<<Սասնա ծռեր>> էպոսի մասին

Մեր նախնիները, իրնց բանավոր ստղծագործությունները բերնեբերան փոխանցելով, հասցրել են սերունդներին: Այդ ստեղծագործություններն են ժողովրդական հեքիաթները, առասպելները, խաղիկները, առած-ասացվցածքները և, վերջապես, էպոսը:

<<Սասնա ծռեր>> էպոսը ձևավորվել է 8-10-րդ դարերում, երբ հայ ժողովուրդը ազատագրական պայքար էր մղում արաբ զավթիչների դեմ: Սակայն էպոսի հերոսները, երևույթները, դեպքերի հաջորդականությունը հուշում են, որ այն կարող էր ավելի վաղ ստեղծված լինել: Դրա մասին է վկայում նաև Արթուր Արմինի 2007 թվականին Լոս Անջելեսում հրատարակած <<Հնագույն հեթանոսական Աստվածաշունչ Սասնա ծռեր էպոսը>> գիրքը, որտեղ հեղինակը մեզ է հասցնում մոտ 40000 տարվա հայ էթնոսի գոյության փաստը, ինչից էլ սկսվում է մարդկության տիեզերաիմացությունը:

Էպոսն առաջին անգամ գրի է առել Գարեգին Սրվանձտյանը 1874 թվականին ասացող Կրպոյից՝ իր <<Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ>> գրքում:

Էպոսը բաղկացած է չորս ճյուղերից՝ <<Սանասար և Բաղդասար>>, <<Մեծ Մհեր>>, <<Սասունցի Դավիթ>>, <<Փոքր Մհեր>>: Իր սիրելի հերոսներին ժողովուրդն օժտել է անպարտելիությամբ, գերբնական ուժով՝ նրանց անվանելով <<ծռեր>>, ովքեր պատրաստ են ամենախենթ արարքների: Նրանք ուժ են ստանում հայրենի հող ու ջրից: Սասնա դյուցազունները կռվում են միայն իրենց ինքնությունը, հայրենիքը պահելու համար, արդարության ու ազատության համար: Նրանք շատ մարդասեր ու մեծահոգի են, բայց թշնամու նկատմամբ կարող են նաև դաժան լինել:

1964 թվականին էպոսների միջազգային մրցույթում <<Սասնա ծռեր>> էպոսը ճանաչվել է լավագույնը իր մարդասիրական գաղափարների համար: Այն թարգմանվել է տարբեր լեզուներով: 1939 թվականին էպոսի 1000 ամյակի առթիվ 60 պատումներից ստեղծվեց <<Սասունցի Դավիթ>> համահավաք բնագիրը:

<<Սասնա ծռեր>> դյուցազներգությունը ենթարկվել շատ գրական մշակումների: Դրանցից են Հովհ. Թումանյանի <<Սասունցի Դավիթ>> պոեմը: <<Սասունցի Դավիթ>> ճյուղը թատերգության է վերածել Հակոբ Օշականը: Ավ.

Իսահակյանը մշակել է <<Մեծ Միեր>> ճյուղը: Քանդակագործ Երվանդ Քոչարը կերտել է Սասունցի Դավթի հոյակերտ արձանը:

Ազգային արժեհամակարգի ձևավորումը <<Սասունցի Դավիթ>> էպոսի միջոցով

Էպոսի դերը մեծ նշանակություն ունի ազգային ինքնաճանաչողության գործում: Այստեղ արտահայտված է ժողովրդի հավաքական կերպարը՝ իր ներքին հակասություններով, սխրագործություններով ու դավաչանություններով, անմնացորդ նվիրումի արտահայտությամբ և օտարամոլությամբ: Հայկական էպոսում արտացոլվել են հայ ժողովրդի բարոյական արժեհամակարգի հիմնական գաղափարները, մարդասիրական հիմնախնդիրները, , որոնց ուսումնասիրությունը արդիական է մեր օրերում: Չնայած հազարամյակների պատմություն ունենալուն՝ <<Սասնա ծռեր>> կամ <<Սասունցի Դավիթ>> էպոսը գիտական ուսումնասիրությունների առարկա է դարձել միայն սկսած 19-րդ դարավերջից:

Դավթին տեսնում ենք հոր կառուցված վանքը նորոգելիս: Ամեն անգամ վանքը փլուզվում էր: Մի օր երազում Աստծո հրեշտակը Դավթին ասում է, որ եթե ուզում է՝ վանքը կանգուն մնա, հիմքի մեջ պետք է թուր դնի: Սա նշանակում է, որ իր գոյությունը պահպանելու համար հայ ժողովուրդը պետք է միշտ ձեռքին զենք ունենա: Մեկ ուրիշ հատվածում մենք Դավթին տեսնում ենք գութանավորներին մոտ հյուրընկալվելիս: Դավիթը ուտում է նրանց մեկ շաբաթվա սննդի պաշարը, ինչի պատճառով ստեղծում է դժվարին կացություն: Իր մեղքը քավելու համար Դավիթը նրանց վեց օրվա վարը մի քանի ժամում է կատարում: Գութանը, որը աշխատանքի խորհրդանիշն է, հանդիսանում է գոյության հիմք՝ արժանանալով ընդհանուր հարգանքի ու մեծարման: Մարդու գոյության կարևոր նախապայմաններից մեկն էլ հացն է, որը ստացվում է հողագործի ծանր աշխատանքի միջոցով: Պատահական չէ, որ հայ ժողովրդի բանահյուսական ստեղծագործություններում աշխատանքի շատ երգեր նվիրված են գութանին, վար ու ցանքին, բերքահավաքին:

Դյուցազնավեպում ժողովուրդը կյանքի իմաստը տեսնում է խաղաղ աշխատանքի մեջ և ատելությամբ է վերաբերվում հարստահարիչներին: Էպոսում մեծ տեղ է տրվում ընտանիքի նկատմամբ հարգանքին: Դավիթը բազմիցս հետևում է արտատեր պառավի խորհուրդներին և հաջողության հասնում: Նա հարգանքով է վերաբերվում նաև արաբ ծերունուն և դադարում է կոտորել Մելիքի զորքին:

<<Սասունցի Դավիթ>> էպոսի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ հերոսները թշնամու դեմ միայնակ են դուրս գալիս: Այստեղ մենք դավաճանություն չենք տեսնում: Ճիշտէ, պատմական անցյալում մեր ազգի մեջ եղել են դավաճանություններ, բայց քանի որ դրանք խորթ են մեր ժողովրհի ոգուն, էպոսում տեղ չեն գտել: Էպոսում առանձնահատուկ տեղ է գրավում կնոջ կերպարը՝ անձնազոհ, մարդասեր, նվիրվող: Գագիկ թագավորի դուստր Ծովինարը, տեսնելով, որ իր պատճառով շատ անմեղ մարդիկ են զոհվելու, դիմում է անձնազոհ քայլի. նա համաձայնում է դառնալ Բաղդադի խալիֆի կինը:

Էպոսում նաև համամարդկային գաղափարներ են արծարծված: Այստեղ ազատությունը սահմաններ չի ճանաչում. Դավիթը քանդում է հոր որսատեղի պարիսպները և ազատություն տալիս անգամ վայրի կենդանիներին:

Դյուցազներգության մեջ կարմիր թելի նման անցնում է ժողովուրդների համերաշխության գաղափարը: Մըսրա Մելիքին սպանելուց հետո Դավիթը ազատ է արձակում նրա զորքին:

Էպոսում չկա կրոնական դավանանքի խտրականություն: Մեր հերոսները պայքարում են միայն հարկային ծանր բեռը թոթափելու և ազատ ապրելու համար:

<<Սասունցի Դավիթ>> էպոսը օտար բռնակալության դեմ հայ ժողովրդի դարավոր պայքարը ներկայացնող էպիկական հուշարձան է: Լայն ընդգրկումով, կառուցվածքի ամբողջականությամբ, ազգային ոգին համակողմանիորեն արտահայտելու հատկանիշներով առանձնանում է շատ ժողովուրդների դյուցազնավեպերից: Սրանք համամարդկային հատկանիշներ են, որոնք մշակվել են դարերի ընթացքում և բնորոշ են հայ ժողովրդին: Դարերի ընթացքում օտար զավթիչները հաճախ ավերել են մեր երկիրը, ոչնչացրել պատմական հուշարձանները, բայց չեն կարողացել ընկճել հայ ժողովրդի՝ ազատության ձգտող կենդանի ոգին: Սա է <<Սասունցի Դավիթ>> էպոսի հիմնական գաղափարը: Էպոսի ուսուցման գլխավոր նպատակներից մեկն էլ մարդասդրության դաստիարակումն է: Օրինակ առաջին ճյուղում Սանասարն ու Բաղդասարը իրենց բերդը կառուցելուց առաջ կացարաններ են կառուցում աշխատավոր մարդկանց համար:

-Առաջ շինենք զէդոց տներ,

Ու նոր շինենք զմեր բերդ.

Էդ խեղճ մարդեր չեն կարնա արևուն առջև կենա:

Ու սկսեցին զտներ:/էջ 34/

Էպոսում հատուկ պաշտամունք կա աշխատավոր մարդու նկատմամբ: Նրանք տիրապետում են ամենահամեստ արհեստների, բարեկամանում են խողճերի, աղքատների, անօգնականների հետ օգնության ձեռք են մեկնում հոգնախ գեղջուկին, նույնիսկ եթե նրանք օտարականներ են:

Հայկական էպոսում վիպական հերոսները փոքր հասակից առանձնապես ռազմական կրթություն չեն ստանում: Նրանք իրենք են մեծերից պահանջում իրենց ինչ-որ բան սովորեցնել: Օրինակ Մեծ Միհրը վանք-վարժատնում որոշ ժամանակ սովորելուց հետո յոթ տարեկանում դիմում է մորը.

-Մարե, հերիք էսպես մնամ.

Հրաման տու ինձ՝ էրթամ սարեր, քարերշրջեմ,

Մարդերու շարք մտնեմ:

Թեև էպոսը կրոնական դավանանք պարունակող ուղղվածություն չունի, սակայն առաջին ճյուղում տեսնում ենք, թե ինչպես Ծովինարը, ամուսնանալով կռապաշտ Բաղդադի խալիֆի հետ, իր հետ Բաղդադ է տանում նաև քահանա՝ շեշտելով ցմահ քրիստոնյա մնալու դիրքորոշումը: Անգամ Բաղդադում Ծովինարի խնդրանքով այդ քահանան է Սանասարին և Բաղդասարին գրել-կարդալ սովորեցնում:

Քրիստոնեական հավատի դրսևորում է նաև Սասնա դյուցազունների բազպանի վրայի խաչը, որը, ելնելով հանգամանքներից, ժամանակ առ ժամանակ փոխում է իր գույնը:

Ըստ էպոսագետների՝ հայկական էպոսում առկա են հոթանոսական հավատալիքների հետքեր: Սա վկայում է այն մասին, որ մեր էպոսը կարող էր ավելի վաղ ժամանակներում ստեղծված լինել: Հեթանոսության արտհայտություն է այն հանգամանքը, որ <<Մեծ Միհր>> ճյուղում Միհրը և Մսրա Մելիքը դաշինք են կապում, որ որևէ մեկի մահից հետո ողջ մնացածը նրա կնոջն ու երեխաներին պետք է խնամի: Դաշինքը հաստատում են ոչ թե Ավետարանի կամ Ղուրանի վրա երդվելով, այլ իրենց մատների արյունը խառնելով: (<<Մատներ կտրին, արուն արնի խառնեցին, պայման դրին, էղան աղբեր:>>(էջ 117)):

Հայրենասիրության ձևավորումը <<Սասունցի Դավիթ>> էպոսի միջոցով

Դարերի ընթացքում հայ ժողովուրդը շատ է ոգեշնչվել <<Սասնա ծռեր>> էպոսի հերոսներից՝ անձնուրաց կռվելով իր գոյության, հարատևության, իր հայրենիքի հարատևության և ազատության համար, ինչը արդիական է նաև մեր օրերում: Ավետիք Իսահակյանը իր մի հոդվածում գրել է. <<Մեր երիտասարդ սերնդի համար Սասունցի Դավիթը նույն ներշնչանքը պետք է լինի: Նա Դավթի պես պետք է բոցավառվի հայրենիքի համար անշահասեր արիությամբ ր զինված գիտությամբ ու տեխնիկայով, ինչպես Դավիթն ու Միհրն են զինված կայծակե թրով, սխրագործություններ կատարի իր սեփական ժողովրդի և ամբողջ աշխատավոր մարդկության ազատագրման և բախտավորության համար>>: Իսկ արձակագիր, թարգմանիչ Հմայակ Ոսկանյանը իր <<Արժանապատվություն, անձնուրացություն, հավատ>> հոդվածում գրել է. << <<Սասունցի Դավիթ>> հերոսական էպոսի մեջ խտացված է հայ ժողովրդի բախտը, հայ աշխատավոր ժողովրդի ճակատագիրը՝ իր բոլոր առանձնահատուկ կողմերով, որին Հայաստանը ենթակա է եղել դարերի ընթացքում: Մեր էպոսը խորին արժանապատվության, անհասանելի անձնուրացության և պայծառ հավատի չքնաղ կերտվածք է: Եվ եզրակացությունն այն է, որ թշնամու դեմ պայքարելիս հայ ժողովուրդը միշտ պահել է սեփական արժանապատվությունը՝ երբեք չդավաճանելով իր հիմնական սկզբունքներին: Հանուն հայրենիքի պետք է կռվել անձնվիրաբար, առանց որևէ կողմնակի նկատառումների, սկսած գործը հասցնել մինչև վերջ>>:

<<Սասունցի Դավիթ>> էպոսում առաջատար գաղափար է հայրենասիրությունը, որը գալիս է հայ կնոջից: Երբ Բաղդադի խալիֆը ցանկանում է կնության առնել Ծովինարին, զգուշացնում է, որ մերժման դեպքում կավերի Հայաստանը: Հայրենասեր և անձնուրաց Ծովինարը իրեն զոհում է հանուն իր երկրի և նրա ժողովրդի:

-Որ ես էն կռապաշտ թագավոր չառնեմ,

Ձամեն տի սպանի իմ պատճառով,

Աղեկն էն է, ես երթամ,

Ուրիշ մարդու թող բան չըլնի:

Ես մենակ մեռնիմ իմ հոր թերեն.

Ես մեկ ջան եմ, էրթամ, կորսվիմ,

Քանց մեր Հայաստան էրկիր ավերի,

Էն հազար-հազար հոգիք կորուսանին:

Հայոց ինքնության մեջ արմատավորված երևույթ է իրականությունը բարոյականության դիրքերից, բարոյական հասկացություններով (անձնվիրություն,պարտք, պատասխանատվություն, արդարություն, խիղճ, ամոթ և այլն) իմաստավորելն ու գնահատելը, սեփական բարոյական չափանիշներով մարդկանց վարքի, բարոյական այլ համակարգերի արժևորումը: Որպես դրա հետևանք՝ հայոց ազգային նկարագրում տեսնում ենք հումանիզմ՝ առանց սահմանների, թշնամու նկատմամբ չափազանց մեծահոգություն, աններելի հանդուրժողականություն, անհիշաչար և անձնուրաց վերաբերմունք և առհասարակ իշխելու, տիրելու կամքի բացակայություն, ինչը նկատվում է նաև մեր օրերում:

Հայկական էպոսում հերոսների հայրենասիրությանը զուգահեռ երևում է երկրի պաշտպանության նկատմամբ սասունցիների դրսևորած անհոգ վերաբերմունքը: Օրինակ, Սասունը շրջապատված էթշնամիներով, սակայն չունի զորք, զորավարներ, պաշտպանական կառույցներ: Չկան նաև լրջմիտ մարդիկ, ովքեր կմտածեն այս ամենի մասին: Հերոսները գալիս-գնում են, սակայն Սասունի կարգավիճակը չի փոխվում. այն մնում է որպես հարկատու երկիր, որովհետև չունի անկախ իշխանություն, բանակ, հզորանալու ուժ և գաղափար: Ներողամտությունը, հանդուրժողականությունը, թշնամուն ատելու անկարողությունը դժբախտաբար ուղեկցվում է իշխելու, նվաճելու, տիրելու կամքի բացակայությամբ: Սա նշանակում է, որ հայն իր պատմության ընթացքում չի ցուցաբերել /չնչին բացառություններով/ ուրիշներին իշխելու, կառավարելու, ուրիշներին իրեն ենթարկելու կամք, ջանք ու ցանկություն:

Ցավոք, պատմությունը ցույց տվեց, որ նման բարոյական սկզբունքներով ու նման բարոյական արժեքներով, վարքագծով ու վերաբերմունքով առաջնորդվելով՝ ի վերջո չես կարող խուսափել կոտորածներից, ցեղասպանությունից ու հայրենազրկությունից: Այստեղ շատ տեղին է հիշել արաբ ծերունու՝ պատերազմը դատապարտող խոսքը՝ ուղղված Դավթին: Ծերունին բացատրում է, որ արաբ

զինվորները մարդիկ են, որոնց Մսրա Մելիքը ստիպողաբար է բերել կռվի: Նա ասում է, որ մարդը մարդուն իրավունք չունի կյանքից զրկելու: Այդ զինվորներն ունեն ընտանիք, կին, երեխաներ, մեկը իր մոր միանուագար զավակն է, մեկը դեռ նոր է ընտանիք կազմել, մեկն իր օջախի սյունն է, մյուսն էլ՝ ալևոր ծերունի: Ծերունին, որ մարմնավորում է ժողովրդի հավաքական կերպարը, հնչեցնում է այս խոսքերը, որոնք արդիական են բոլոր ժամանակների համար:

Պատմությունը ցույց է տվել, թե ինչպես մեր էպոսը՝ բանահյուսական այդ գանձը, դարեր ի վեր ոգևորել է հայ ժողովրդին, իշխել նրա մտքի, սրտի ու գիտակցության վրա և հասել սերունդներին: Իր արտահայտած գաղափարներով այն այսօր էլ խիստ արդիական է:

Աշխատասիրության ուսուցումը էպոսի միջոցով

Աշխատանքը մարդկային ամբողջ կյանքի առաջին հիմնական պայմանն է: Յուրաքանչյուր մարդու դեպի աշխատանքն ունեցած վերաբերմունքի մեջ կարելի է տեսնել վերաբերմունք դեպի հայրենիքը, անցած ու եկող սերունդները: Ֆիզիկական և մտավոր աշխատանքի միասնության բազմաթիվ օրինակներ ենք տեսնում Սասունցի Դավիթ էպոսում: Սանասարն ու Բաղդասարը չորս օրվա ընթացքում կառուցում են քառասուն տուն, այնուհետև ահռելի քարաժայռերից կառուցում են Սասնա բերդը, ինչպես և մի փոքրիկ եկեղեցի: Եվ կառուցման հետ կապված աշխատանքի բոլոր տեսակները նրանք երկուսով են կատարում.

Սանասար պետ-պետ քարեր կպերեր,

Բաղդասար կը շարեր.

Շինեցին, խանին գըլոխ:

Դավիթը նույնպես գառնարած է, նախրորդ, որմնադիր, հերկ անող , անգամ ճարտարապետ, շինարար: Դավիթը, Մարութա սարում վառվող լույսը տեսնելով, իսկույն գծում է շենքի հատակագիծը և որոշում է անպայման վերակառուցել վանքը:

Մեր ժողովրդական բանահյուսության մեջ,մասնավորապես Սասունցի Դավիթ էպոսում, վերաբերմունքը դեպի աշխատանքը ներկայացվում է որպես բարոյական սկզբունք: Էպոսում աշատանքը որպես բարոյական արժեք, ամբողջանում է այն ժամանակ, երբ տեսնում ենք Սասնա հերոսներին այս կերպ.

...Խորոխպեր, ես կըխնդրեմ քո մոտեն,

Ընցկնա պարապութեն չենք կըռնա ընցըցի,

Մկա քե խաթըր կա մըտ գեղական ,

Ձի խամար մեկ ռընջբրութեն ըմ առ:

Հերոսների սխրանքներն անգամ աշխատանքային բնույթ ունեն: Մեծ Միհրը յոթ տարի Սասունը պահում է իր որսած կենդանիներով: Սասնա հերոսները անձնական փառքի ու երջանկության համար մարտնչող ասպետներ չեն, նրանք ապրում են աշխատանքի մարդկանց հոգսերով ու տանջանքներով, որոնցից ժողովրդին ազատագրելու մեջ են տեսնում իրենց երջանկությունը: Սասունցի

Դավիթը ժողովրդի նյութական պայմանների բարելավման, մարդկանց բարօրության միակ աղբյուրը համարում է արդար, ազնիվ աշխատանքը: Մինչև այժմ էլ ժողովրդի մեջ պահպանվել է աշխատանքի արդարությոնն ու սրբությունը խորհրդանշող՝ արդար եզան վաստակ արտահայտությունը:Ժողովուրդը արդար եզան վաստակ է համարել սեփական տքնությամբ ու քրտինքով բաստակած հացը: Ժողովուրդը երջանկության հասնելու միակ ճանապարհը համարել է ազատ ու ստեղծարար աշխատանքը:Էպոսի բոլոր հերոսները աշխարհ են եկել աշխատանքի համար,նրանք իրենց բավականությունը ստանում են աշխատանքի ընթացքում, ժողովրդին անձնվեր ծառայելու մեջ: Ձենով Հովանը Դավիթին բացատրում է, թե աշխատանքը, նախրորդությունը միակ արդար ճանապարհն է կյանքում ապրելու համար:

Հըմեն մեկ տավրի գլոխ

Մեկ կուտ կուրիկ, մեկ կուտ ցուրին միզի հախ կը տան .

Շաբթեն մեկ անգամ էլ,

Քաղքի բոլութին ի, տուն մեկ խաց կը տան:

Դավիթն էլ խոստանում է ծաղկի պես պահել նախիրը:Նրա համար աշխատանքը մեծագույն հաճույք է, առանց աշխատանքի կյանքը Դավիթի համար դադարում է իմաստավոր լինելուց:

Աշխատանքը ոչ միայն նյութական բարիքների աղբյուր է, այլ բարոյական հայացքների: Դավիթը հալալ աշխատանքի մարդ է, ազնիվ: Նա իր ծնող ժողովրդի նման միայն իր սեփականն է ուզում, իր աշխատանքի արդյունքը: Ինչ որ չի բխում իր աշխատանքից, իրենը չի համարում: Հալալի, արդարի գեղեցկությունը էպոսում բավական արտահայտիչ կերպով է դրսևորվել: Հալալը սեփական աշխատանքով արարվածն է, և դրանից դուս ամեն ինչ հարամ է ու խորթ ժողովրդին: Սա ժողղովրդի արդարության փիլիսոփայությունն է, կյանքի նշանաբանը, նրա բարոյական սկզբունքը: Այն, ինչ ստեղծվում է արդար աշխատանքով, նրա նկատմամբ հարգանք և սրտացավություն կարող է հանդես բերել միայն աշխատավոր մարդը, աշխատանքի սովոր մարդը: Խանդութի համար հավաքված փահլևանների հետ խնջույքի նստած Դավիթը, տեսնելով թափթփված հացի կտորները, ասում է. <<Էլի, էսա սուֆրեն վիրու, մեղք էսա խացեր կոխեն>>: Սա

աշխատանքի մարդու հոգեբանությունն է: Նա միայն կարող է իմանալ հացի՝ աշխատանքի արգասիք ու մեղք լինելու հանգամանքը:

<<Սասունցի Դավիթ>> էպոսը աշխատավոր ժողովրդի անկրկնելի ստեղծագործությունն է, որտեղ մարմնացել են հայրենի հողի , ազատ ու արդար աշխատանքի, իր հայրենիքը շենացնող ու հզորացնող աշխատավոր մարդու բարոյական վսեմ արժեքներն ու սկզբունքները:

Եզրակացություն

<<Սասունցի Դավիթ>> էպոսի միջոցով աշակերտը ծանոթանում է իր ժողովրդի մշակույթին, նրա անցած պատմական ուղուն, հայտնի և սիրելի հերոսներին: Այն ուղղակիորեն ազդում է սովորողների ներաշխարհի և հոգեբանության վրա, հարստացնում ու զարգացնում է նրանց արժեքային համակարգը, ձևավորում է հայրենասիրություն և անհրաժեշտության դեպքում զենքը ձեռքն առնել ու պայքարել նրա ազատության և անկախությա համար:

<<Սասունցի Դավիթ>> էպոսի համահավաք բնագիրը թարգմանվել է աշխարհի շատ լեզուներով և ունի միջազգային ճանաչում: Մեր ժողովրդական էպոսի գաղափարախոսությունը երբեք չի հնանում, որովհետև այն յուրաքանչյուրին սովորեցնում է սիրել հայրենիքը, նվիրվել նրան, լինել աշխատասեր ու մարդասեր, պահպանել հայ ընտանիքի ավանդույթները, չենթարկվել բռնակալներին, ունենալ անկախ և ապահով հայրենիք և, ամենակարևորը, խաղաղ գոյակցել աշխարհի այլ ժողովուրդների հետ:

Հայկական էպոսը ժողովրդական իմաստաբանության, նպատակի, հոգեբանական, բարոյական նկարագրի մի կուռ ամբողջություն է: Փոխանցվելով սերնդեսերունդ՝ այն դարձել է հայ ժողովրդի հոգևոր մշակույթի անբաժանելի մասնիկը: Գաղափարական խորքայնության ու բազմաբովանդակության, արծարծված համամարդկային խնդիրների շնորհիվ մեր էպոսը դուրս է եկել ազգային արժեքների շրջանակից և ներառվել համաշխարհային գրականության մեջ՝ դառնալով նաև օտար ազգերի հոգևոր-գրական մշակույթի մի մասնիկը:

Մեր էպոսն անմահ է: Այն արժեքները, որ ժողովուրդն ավանդել է մեզ, որոնք կազմում են մեր ժողովրդի իմաստասիրության անմահ հուշարձանը, մեծ խնամքով պիտի պահենք ու փայփայենք: Սիրենք հայրենիքը, հային ու հայկականը:

Հետազոտական աշխատանքի նորույթը - <<Սասունցի Դավիթ>> էպոսի ուսումնասիրման արդյունքում ունենալ այնպիսի արժեհամակարգ, որտեղ տեղ կգտնեն այնպիսի արժեքներ, ինչպիսիք են հայրենասիրությունը, մարդկայնությունը, մեծահոգությունը, ներողամտությունը, ազնվությունը, հարգանքը մեծերի նկատմամբ, խորհուրդ լսելու կարողությունը, աշխատասիրությունը, հայ ընտանիքի ավանդույթները պահպանելը, բռնակալին չենթարկվելը, աշխարհի ժողովուրդների հետ խաղաղ գոյակցելը:

Օգտագործված գրականություն

1. Աբեղան Մ., Երկեր, հ. Ա, Ե., 1966
2. Գյուրջինյան Դ., «Մատենիկ», ընթերցանության գիրք, Երևան, 2012
3. Թիրաբյան Ն.Հ., «Կամար» Գրականութեան և և գեղարուեստի անկախ պարբերաթերթ, Պեյրութ, 2016
4. Զանփոլադյան Մ., - 1969, Թումանյանը և հայ ժողովրդական էպոսը, Երևան, 1969
5. Զանփոլադյան Մ., - Սասունցի Դավիթ, առաջաբանը՝ Ս. Հարությունյանի, Երևան 1981:
6. Ղանալանյան Ա. «Սասունցի Դավիթ», Հայկական ժողովրդական էպոս, , Երևան, 1939,
7. Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ, Մ.Խերանյանի «Սասնա տուն» դյուցազնավեպի համառոտ վերապատմում, Երևան, 2015
8. Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Ա., ճանաչեր երկիրը քո, Գիրք Ե, Ես իմ անուշ Հայաստանի, Երևան, էդիթ Պրինտ, 2012
9. Օրբելի - 1956, Հայկական հերոսական էպոսը, Երևան, 1956:
10. Բյուրքյան Լ. Լ, Տեր-Գրիգորյան Ա., ճանաչեր երկիրը քո, Գիրք Գ, Ծաղկաքաղ հայկական հուշարձանների, Երևան, էդիթ Պրինտ, 2012
11. Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Ա., ճանաչեր երկիրը քո, Գիրք Ե, Ես իմ անուշ Հայաստանի, Երևան, էդիթ Պրինտ, 2012
12. 13. Օրբելի - 1956, Հայկական հերոսական էպոսը, Երևան, 1956